

ԱԹՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

(Շ - Բ - Ե - Լ - Ի , Ա - Բ - Բ - Գ , Բ . Ա .) :

Է .

ԱԹՈՒ ՀԱՅՈՑ ԵՐ ԱԹՈՒ ԱՆՏԻՈՒԹԵՑ .

Այժմ խօսիմք Հայոց աթոռոյն և Անտիոքայ աթոռոյն յարարերութեանց վրայ, որ աւելի պարզ աւելի գիւրին է: Երբէք պատմութիւնը չյիշատակեր որ և իցէ յարարերութիւն մը ընդ մէջ առաջին աթոռոյ վերակացութեան Արեւելից և ընդ մէջ առաջին աթոռոյ թագաւորութեան Հայոց. պատմութիւնը կը լռէ, և հակառակորդք ալ որ և իցէ իրենց նպաստաւոր յիշատակութիւն մը չեն կարողացած գտնել ցարգ: Ուսանց համար բոլոր փաստը ենթադրական է, իբր թէ Աեսարիոյ երսարքոսական աթոռը ենթարկեալ ըլլայ Անտիոքայ պատրիարքական աթոռոյն, այդ ենթադրութեան մէջ ալ խնդիրը լոկ միջնորդական ենթարկութեան կը վերածուի, և ինչ որ խօսեցանք ու պատճառարանելինք Աեսարիոյ աթոռոյն նկատմամբ բաւական պէտք էր սեպուէր Անտիոքայ աթոռոյն գերագոյն իշխանութիւնը մերժելու:

Աստիճանեայ դրութեան մեծ փաստը Անտիոքայ պատրիարքին կրած անուան է, այսինքն պատրիարք արեւելից անուանակոչութիւնը, որով բոլոր Արեւելքը իւր թեարկութեան ներքեւ առնուլ կը կարծուի: Սակայն մեք արդէն ըսինք թէ Արեւելք բառը յատուկ անուն էր կայսերական վերակացութիւններէն միոյն, և ինչպէս քաղաքական առմամբ կային արեւելքի մէջ թագաւորութիւններ որք ազատ և ինքնիշխան էին և Արեւելից վերակացուէն կախում չունէին, այդպէս ալ եկեղեցական առմամբ կային արեւելքի մէջ հայրապետութիւններ որք արեւելից պատրիարքէն բնաւ կախում չունէին: Արեւելք անունը այդ առթի մէջ չկրնար առնուիլ իբրև գիմարաժանեալ Արեւմուտք անուան, այլ պարզապէս իբրև մի պաշտօնական և քաղաքային աշխարհագրութեան յատկացեալ անուան:

Նեղոս Նոքսոպատրիոս, որ պատրիարքութեանց սահմանները գծելու մէջ կը թուի Հայաստանը կամ Հայաստանները Անտիոքայ պատրիարքական թեմին մէջ պարունակել, իւր կարծեաց

Հաստատութեան համար գորաւոր և սրբաշիջ փաստ մը յառաջ
 չբերեր, և այնպիսի մի նկարագրութիւն կուտայ որ լի է սխալ-
 ներով և անճշտութիւններով, մինչև անհնար կը դառնայ նորա
 խօսքերուն հետևողութեամբ որոշ գաղափար մը կազմել Անախ-
 քայ պատրիարքութեան սահմաններուն նկատմամբ: Գործադար-
 րիսի խօսքերը լի են շիտիժ բացատրութիւններով, զորօրինակի
 էրբ կը գրէ Պոնտոսի եքսարքութեան վրայ. « Եւ նահանգք ի
 « սմա են . . . մեաասաներորդ Սերաստիա երկրորդ Հայոց, որ ու-
 « նի եպիսկոպոսունս եօթն, . . . երեքտասաներորդ Սելիսիէ
 « Հայոց, որ ունի եպիսկոպոսունս ինն, յորայ մի է և եպիսկոպոսն
 « Ասիխանի, ուր աքսորեցաւ բերանն ոսկի Յովհաննէս » (Նէլա-
 II. 733.): Աստ Սերաստիա երկրորդ Հայք կը լինի մինչ ուրիշ
 գաւազանագրոց մէջ հաստատուն կերպով առաջին Հայք է. իսկ
 Սելիսիսիէ չիմացուիր թէ ո՞ր Հայոց մեարապօլտութիւնն է:

Գալով արևելից պատրիարքութեան սահմաններուն Գործա-
 դարիսի բառերուն հնչման համաձայն, Անախքայ պատրիար-
 քութիւնն ընդ իւրև ունի. « ՉՀայաստանս, և զԱրասգիա և զԻ-
 « բերիա, և զՄեդիա և զՔաղզէաստան և զՊարթևաստան և
 « զԿամացիս և զՄիջագետս: Եւ արդ ունի Մեարապօլտարանս
 « երեքտասան » (Schols. II. 723.): Այդ բացատրութեան մէջ յի-
 շուած երկիրներուն անունները ուրիշ մի օրինակի մէջ դարձեալ
 կը յիշուին, այլ ոչ իբր ենթարկեալ գաւառ, իբր զի կը կարգամք
 թէ պատրիարքութիւնն Անախքայ տարածի. « զէպ յԻբերիա և
 « յԱրասգիա և ի Հայաստան. » այսինքն զէպ յաշխարհս Արաց
 և Սգերաց և Հայոց, որով այդ երեք աշխարհք երբէք Անախքայ
 պատրիարքութեան ենթարկեալ չեն լինիր, այլ զէպ ի նախագրու-
 թեան կամաւոր կամ ակամայ զանցառութիւնը սահմանակից-
 ները ենթարկեալ գաւառի կը վերածէ, մանաւանդ որ բնագրին
 պարս-նալէ բային և զէպ ի նախագրութեան խնդիրները նոյն հայ-
 ցական հոլովով կը պահանջուին ըստ կանոնաց լեզուին: Ըստ մեզ
 երկու ձևով գրուածներուն մէջէն նախագրասելի է զէպ ի նախա-
 գրութեամբ ընթերցումը, քանի որ պատմութիւնն ալ երբէք ո
 և իցէ յարտերութիւն մը չյիշեր Հայոց և Անախքայ ակտոնոց
 մէջտեղ: Նոյն ինքն Նեղոս Գործադարիսս երբ ստորև կը կրկնէ
 Անախքայ պատրիարքութեան սահմանները կը գրէ այսպէս. « Զի
 « բաց ի Քաղիզնէ և ի Հնդկաց և ի Պարսից, ունի նաև զնահան-

« գրոս Առաջին Աելիսիւրիոյ, յորում է Անտիոք քաղաք, զերկ-
 « րորդն Աելիսիւրիա, և զԱիլիկիա, և զԲսաւրիա, որ և Նազանգ
 « Եփրատական, և զՆազանգս Հագիուպոլսոյ և Քէոզորիադու և
 « Ուրոյենոյ, և զՄիջագետս որ է Նազանգ Զորրորդ Հայոց, և
 « զսազմանակից աեղիս և զսազմանս Ասորւոց և Պարսից և զայլ
 « և ս Նազանգս և զաշխարհս կարի յոյժ: Զի իշխանութիւն նորա
 « տարածէր մինչև ցՔաղկեդոն որ է հանդէպ Ինգանդիոնի որ
 « այժմ Կոստանդնուպոլիս կոչի և է ի վերայ Պրոպանտոսի »:
 Այդ նկարագրութեան մէջ Հայաստան յիշուիլը բնաւ, և ի հարկէ
 Աելիսիւրեայէն և Աիլիկիայէն և Բսաւրիայէն ալ ստորին Նազանգ
 մը չէր, որ կարենամք ըսել թէ յանուանէ յիշուելու արժանի
 եղած չէ և այլ և Նազանգաց անորոշ բացատրութեան ներքե
 պարունակուած է: Գորսոպատրիոսի այդ երկրորդ վկայութիւնը
 և ս քան զևս իրաւունք կուտայ մեզ պնդելու թէ առաջին վկա-
 յութեան մէջ ուղղագոյն ընթերցուածն է որչաք է Հայաստան, և
 Հայաստան յիշուած է իբր սազմանակից և ոչ իբր ենթարկեալ:

Անտիոքայ պատրիարքութեան անուանակոչութեան գործա-
 ծուած Արեւելք բառին անձուկ և յատուկ նշանակութիւնը հաս-
 տատելու համար կաւելցնեմք թէ ամեն հեղինակք և նաև նոյն
 ինքն Գորսոպատրիոս լոկ Արեւելից վերակոչութեան տասնուհինգ
 Նազանգները կուտան Անտիոքայ պատրիարքութեան, որք յետոյ
 նուազեցան Երուսաղեմայ պատրիարքութեան կազմուելովն, և
 յիշատակեալ տասնուհինգ Նազանգներն ալ կը պարունակեն հա-
 րիւր յիսուն ու երեք եպիսկոպոսական աթոռներ, և Անտիոքայ
 պատրիարքութիւնը կը նմանցուի աւետարանական ուսկանին,
 յորում կային 153 ձուկեր: « ի պատրիարքութեան Անտիոքայ են
 « հարիւր և յիսուն և երեք աթոռք եպիսկոպոսականք ըստ բանի
 « աւետարանին թէ՛ էր գործին լի մեծամեծ ձկամքք հարիւր յի-
 « սուն և երիւք » (Schel. II, 754): Այդ Նազանգներէն մին է և ս Մի-
 ջագետք, որ կը կոչուէր յօտարաց Զորրորդ Հայք, ինչպէս և Գոր-
 սոպատրոսի խօսքերը ցուցուցին, և ինչպէս ամէն պատրիարքա-
 կան տեղագիրք կամ վիճակագիրք ալ կը հաստատեն: Եւսև Ու-
 րոյենեայ Նազանգը որոյ մեարսագօլտարանն է Եղեւիա, Անտիո-
 քայ պատրիարքութեան ենթարկեալ Նազանգներէն էր, մինչ այդ
 Նազանգն ալ ժամանակ մի Հայաստանի մաս սեպուեցաւ: Ըստ
 այսմ կրնամք տարածել Անտիոքայ պատրիարքութեան ալ այն

պատճառաբանութիւնը զոր ըրինք Աեսարիոյ եքսարքութեան նկատմամբ, և Առաջին Հայոց և Երկրորդ Հայոց նահանգներուն անուանց վրայ հիմնուելով, ըսինք թէ Հայոց կամ Հայաստանի անունը կրող նահանգի մը գոյութիւնը առիթ տուաւ նոյները բուն և Մեծ Հայաստանի հետ շփոթելու, մինչ բուն և Մեծ Հայաստանը երբէք Անտիոքայ պատրիարքութեան նահանգ չեղաւ:

Ինչ որ մինչև ցարդ ապացուցինք իբր տրամաբանական հետեւութիւն՝ քաղդատութեամբ և մեկնութեամբ զանազան վկայութեանց և դրութեանց, նոյնն է մի բացայայտ ստուգութիւն տեղակազրական կամ վիճակազրական ցուցակաց պարզ խոստովանութեամբ հաստատեալ, յորս բուն և Մեծ Հայաստանը դուրս կը հանուի Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալ նահանգներու կարգէն:

Այդ վիճակազրոց մէջ Զորրորդ Հայոց նահանգին նկարագրութիւնը հետեւեալ խօսքերով կը փակուի. «նահանգ Աերին Միջագետաց կամ Զորրորդ Հայոց, Մեսրապոլտարան Ամիզայ, Եպիսկոպոսարանք (այս ինչ և այն ինչ) և գղեական Սամոքարդայ: Աստ աւարտին Միջագետք, ուր են և Տաւրոս և կիրճն Բալայիսաց և սկիզբն Հիւսիսային աշխարհին, որ կոչի Մեծ Հայաստան» (Schels. II. 686). Այդ աշխարհը ուրիշ անունով ալ կը կոչուի «Միւս նահանգ Զորրորդ Հայոց» (Schels II. 687) թէսլէտ և մեքչունիմք բաւական փաստեր այդ տարօրինակ անուանակոչութեան մեկնութիւնը տալու, բայց որովհետև մեք անուանց խնդիրներով չեմք զբաղիր այլ իրաւանց, և կոչմանէն աւելի իրականութիւնը կը զննեմք, կը վերադասեմք այն նկարագրին վերջին խօսքերը յառաջ բերել, ուր գրուած է այսպէս. «Գիտելի է զի այս նահանգ ինքնագլուխ է և ոչ է ենթարկեալ ի հոգևորականս առաքելական աթոռոյն (Անտիոքայ), այլ պատուեալ է վասն Սրբոյն Գրիգորի Հայաստանեայց և ունի քաղաքս և բերդս երկերիւր» Schels II. (687.). Այդ խօսքերը լուսաւոր կերպով և ամենաբացայայտ ոճով կը հաստատեն թէ Մեծ Հայոց աթոռը, որ է Հայաստանեայց բուն աթոռը՝ ինքնագլուխ է, թէ իւր ինքնագլխութիւնը նախնական է և անգստին Ս. Գրիգորի Նուսաւորչի ժամանակէն, և թէ Հայաստանը կը պարունակէ երկու հարիւր քաղաքներ և բերդեր, որ է ըսել երկու հարիւր եպիսկոպոսական աթոռներ: Աւրեմն մեր կարծեաց ստուգութեան վրայ

երկրայել իսկ հնար չէ:

Առաջին դարերէն կարի անագան ժամակի մէջ, այսինքն երեք-ասաներորդ գարուն մէջ Անտիոքայ լատին պատրիարքները համարձակեցան պնդել թէ Հայաստանն իրենց ենթարկեալ է: Գրիգոր Թ. պապն Հռովմայ կը գրէ. « Յարգելի եղբայրն մեր պատրիարքն Անտիոքայ առաջի արար մեզ . . . թէ Հայաստան ա. մենայն անկանի ի մէջ սահմանաց պատրիարքութեան Անտիոքայ » (Rayn I.). Սակայն Անտիոքայ լատին պատրիարքներ կըրնային թերևս արդարանալ: Այն ժամանակ, այսինքն յամին 1238, Հայոց կաթողիկոսութիւնը կը գտնուէր ի Նիլիկիա, և Նիլիկիա իսկապէս Անտիոքայ պատրիարքութեան նահանգ էր, և այդ կողմանէ կարծեցին թերևս լատին պատրիարքները Հայոց կաթողիկոսութիւնը իրենց իշխանութեան ենթարկել: Սակայն այն ժամանակ եկեղեցւոյ նախնական սուրբութիւնը փոխուած էր և պատրիարքութիւնը տեղական իշխանութիւն լինելէ դադարած և ազգային կամ ծիսական իշխանութիւն եղած էին, այսինքն փոխանակ, որոշեալ նահանգներու ամբողջովին իշխելու, կ'իշխէին իրենց ազգէն և իրենց ծէսէն եղող հաւատացելոց սըր որ լինին: Հռովմայ պապերն յանդիմանեցին լատին պատրիարքներն Անտիոքայ իրենց անհիմն պահանջմանց համար, և ինչպէս իրենք իրաւասութիւն կը վարէին ամեն լատինաց վրայ և նաև ուրիշ պատրիարքութեանց սահմաններուն մէջ գտնուող լատինաց վրայ՝ ծիսական միութեան պատճառով, նոյն կերպով պարտաւորեցան ճանաչել որ Հայոց կաթողիկոսներն ալ իրաւասութիւն ունին ամեն Հայոց վրայ որ երկիր և որ գաւառ, որ գտնուին: Իննովկենտիոսի Գ. և Գրիգորի Թ. պապերուն կոնդակներն, (Rayn. I. 139, 235.) լիովին կը բացատրեն և կը հաստատեն այդ տեսութիւնները և աւելորդ կը դատեմք այս տեղ բուն իսկ իրենց խօսքերը յիշել: Միայն իբր լատինաց կարծեաց օրինակ կը յիշեմք թէ Գուլիելմոս արքեպիսկոպոս Տիւրոսի ժամանակակից սլատմաբունն, 1141 ամին ի Սիօն գումարեալ լատինաց ժողովոյն վրայ խօսելով, այսպէս կը բացատրէ Հայոց կաթողիկոսին իրաւասութիւնը. « Այսմ ժողովոյ ներկայ եղև ծայրագոյն Քահանայապետն « Հայոց, նա ինքն գլուխն ամենայն եպիսկոպոսացն Ասպաղովկիոյ, « Մարաց, Պարսից և երկուց Հայաստանեայց, վարդապետն Գե. « րազանց որ կոչի Աթողիկոս »: Սա ինքն է Գրիգոր Գ. Պահ-

լաւ ունի կաթուղիկոսն, Շնորհալուոյ եղբայրն:

Քայց այն որ աւելի ևս անհիմն կը ցուցնէ հակառակորդաց կարծիքն այս է, թէ շատ դժուարին է յատուկ գաղափար մը կազմել թէ ո՞րն է այն երկիրը, զոր լատինք Հայաստան կը կոչէին: Նելստրաա երկու վիճակագրութիւն կը հրատարակէ որ այդ ժամանակին կը սլատկանին, մին յօրինեալ ի 1225 և միւսն ի 1350, և այդ վիճակագրութիւնները զննելով կը գտնեմք որ Մեծ Հայք կոչուած աշխարհին այնպիսինահանգներ և գաւառներ կը տրուին, զորս մեք երբէք Հայաստան ընելու յաւակնութիւն չունիմք: Առաջին վիճակագրութիւնը կը գրէ. « Եւ Հայաստան . . . Աթոռ « երկրորդ Եղեսիա ի Հաագէս, ընդ որով են եպիսկոպոսարանք « մասասան: Աթոռ Զորրորդ Ապամիա, ընդ որով են եպիսկոպոսարանք եօթն: Աթոռ Հինգերորդ Հերապոլիս ի Մալբէք, ընդ « որով են եպիսկոպոսարանք ութն: . . . Եւ Հայաստան (դարձեալ) « Աթոռ ութերորդ Աելեւկիա, ընդ որով են եպիսկոպոսարանք « քսան և հինգ » (Schels. II. 756), երկրորդ վիճակագրութիւնն ալ քիչ սարրիբութեամբ քայց առաւել անակողութեամբ կը գրէ. « Եւ « Մեծ Հայաստան Աթոռ Երրորդ՝ Եղեսիա որ է Հաագէս, ընդ « որով են եպիսկոպոսարանք ութն . . . Աթոռ Զորրորդ Ապամիա, « ընդ որով են եպիսկոպոսարանք եօթն, Աթոռ Հինգերորդ Հերապոլիս որ է Մալբէք, ընդ որով են եպիսկոպոսարանք ութն: . . . Եւ « Հայաստան (դարձեալ) Աթոռ Եօթներորդ Անարիարդ (կամ « Անաւարդ), ընդ որով են եպիսկոպոսարանք ինն » (Schels. II. 770): Եւ այդ Եղեսիա է ի Միջագետս, Ապամիա և Հերապոլիս են յԱսորիս, Աելեւկիա է յԻսաւրիա և Անաւարդ է ի Կիլիկիա: Աթէ այս է լատինաց իրենց ենթարկել ուղած Հայաստանը, կամ իրենց գաղափարած Մեծ Հայաստանը, մեք սիրայօժար կը յայտարարեմք թէ իրենք չեն գաչիր երբէք այն երկրին որ բուն Հայաստանի անունով ճանչցուած է ամեն տեղ և ամեն դար, և որ իսկապէս Հայոց ինքնագլուխ աթոռոյն իրաւասութեան սահմանն է: Երբ Անտիոքայ աթոռը իրաւասութիւն կը տարածէ Դաւաբիոյ կամ Սիւրիոյ գաւառաց վրայ և այդ գաւառներուն Հայաստան անուն կուտայ, ասով բուն Հայաստանին վրայ իրաւասութիւն վարած չէ կարող ըսուիլ:

Թ.

ԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԵՐ ԱՐՈՒ ԳՈՍՏԱՆՔՆՈՐՊՈՂՍՈՅ.

Աստանդնուպոլսոյ աթոռը ուրիշ կերպով չէ կարող ներկայա-
նալ իբր Հայաստանի վրայ գերիշխանութիւն վարող, եթէ ոչ իբր
յաջորդ իրաւանց և իրաւասութեանց եքսարքութեան Աեսարիոյ :
Մերժելով Աեսարիոյ աթոռոյն կարծեցեալ իրաւասութիւնը, մեր-
ժած կըլինիմք ևս Աստանդնուպոլսոյ աթոռոյն ենթադրեալ
իրաւասութիւնը : Բայց տակաւին կուզեմք քանի մի խօսք աւել-
ցնել ուղղակի Աստանդնուպոլսոյ աթոռոյն նկատմամբ, որովհե-
տե երբ ցուցնեմք թէ Աստանդնուպոլսոյ աթոռը բնաւ իշխա-
նութիւն չէ ունեցած Հայաստանի վրայ, նույն իսկ ի հակադար-
ձէն հաստատած կըլինիմք անգամ մի ևս թէ ուրեմն Աեսարիոյ
աթոռն ալ մի այդպիսի իշխանութիւն ունեցած չէ : Չի եթէ եր-
բէք Աեսարիոյ աթոռը Հայաստանի վրայ իրաւասութիւն ունեցած
լինէր, իւր յաջորդն, այսինքն է Աստանդնուպոլսոյ աթոռը, որ
ամեն միջոցներով Հռովմայ և Սնախաքայ պատրիարքութիւններէն
նահանգներ և գաւառներ կը հատանէր, հնար չէր որ լռութեամբ
ընդունած սեպուէր իւր սեպհական և ժառանգական իրաւասու-
թեան սահմաններէն մի մասին սուկոսիլը :

Քաղկեդոնի ժողովը յորում ճշդուեցան Աստանդնուպոլսոյ
պատրիարքութեան սահմանները և իրաւասութիւնը, այսպէս
կը խօսի ի Կանոնն ԻԸ. « Հետեւելով յամենայնի կանոնաց Հարցն
« Սրբոց, և ճանաչելով զարգիս ընթերցեալ կանոն հարիւր և յի-
« սուն աստուածատէր եպիսկոպոսաց, զնոյն սահմանեմք և մեք
« վասն իշխանութեանց սրբոյ եկեղեցւոյն Աստանդնուպոլսոյ՝ նո-
« րոյն Հռովմայ : Վասն զի իրաւամբ Հարք սահմանեցին իշխա-
« նութիւնս վասն գահուն Հնոյն Հռովմայ, զի աթոռ էր քաղա-
« քին որ զկայսրութիւնն վարէր : Սոյն խորհրդով վարեալ և հա-
« րիւր և յիսուն աստուածատէր եպիսկոպոսունք համահաւասար
« իշխանութիւնս շնորհեցին գահուն Նորոյս Հռովմայ, և ուղղու-
« թեամբ դատեցին, զի քաղաք որ կայսերութեամբ և Սինկղիտի-
« կոսաւն է պատուեալ և վայելէ արտօնութիւնս համահաւա-
« սարս ընդ Հռովմայ զշխային քաղաքաց, հարկ է զի յիրս եկե-
« ղեցականս ոչինչ տարբեր ի նմանէ բարձրացի և մեծացի, և
« լինիցի երկրորդ զկնի Հնոյն : Արպէս զի Պոնտական և Սսիական

« և Քրակեան զիճակաց մետրապոլիտք միայն և նաև եպիսկո-
 « պոսուք նախայիշատակեալ զիճակաց որ են ի բարբարիկ աշ-
 « խարհս, ընկալցին զձեռնադրու թիւն ի վերոյիշեալ գահէն եկե-
 « ղեցւոյն Առստանդնուպոլսոյ, իսկ ի նախանգս իւրաքանչիւր մեա-
 « րապոլիտք զիճակաց ընդ եպիսկոպոսաց որ ի նախանգին տացին
 « զձեռնադրու թիւն եպիսկոպոսաց որ յիւրաքանչիւր գաւառս
 « իցին, որպէս աւանդեն և կանոնք աստուածայինք: Իսկ մետրա-
 « պոլիտք յիշեալ նախանգաց, որպէս ասացաւն, առցին ձեռնա-
 « դրու թիւն յարքեպիսկոպոսէն Առստանդնուպոլսոյ, երբ ելցին առ
 « նա ըստ սոյնորու թեան զկնի աւարտելոյ ընտրու թեանց և զկնի
 « հաղորդելոյ նմին զամենայն » (Acta. IV. 691.): Արդ եթէ Հայոց
 կաթողիկոսները պարտաւոր էին անհրաժեշտ կերպով ձեռնա-
 դրու թիւն ընդունել Աեսարիոյ եքսարքէն և նոյն եքսարքին գե-
 րագոյն իշխանութիւնը ծանաչել, երբ Քաղկեդոնի ժողովոյն կա-
 նոնը նոյն իրաւունքը փոխանցեց Առստանդնուպոլսոյ պատրիարք-
 ներուն, այդ վերջինքս ի հարկէ պահանջած կը լինէին գործածել
 Հայոց վրայ իրենց օրինաւորապէս և կանոնաւորապէս ժառան-
 գեալ կամ ստացեալ իրաւունքները: Սակայն պատմութեանց մէջ
 այդ տեսակ պահանջման հետքն անգամ չկայ: Եւ հնար ալ չէ
 իբր պատճառանք յառաջ բերել թէ յարաբերութեանց պակա-
 սութենէն չկարացին իրենց պահանջը որոնել, որովհետև այդ
 ժամանակներուն մէջ յաճախ յարաբերութիւններ տեղի ունեցան
 Հայոց և Յունաց մէջ Նահակի և Զաւենի և Ասպուրակէսի կա-
 թողիկոսութեան օրերուն: Ս. Սահակ Ա. Պարթև որ ասոնց յա-
 ջորդեց՝ թղթակցութիւններ ունեցաւ Սօքրոսիմիանոսի և Արտղղի
 Առստանդնուպոլսոյ պատրիարքներուն հետ Եփեսոսի Ս. Ժողովոյն
 նկատմամբ: Նոյն ինքն Ս. Սահակ յատուկ բանակցութիւններ ու-
 նեցաւ Թէոդոսիոս կայսեր և Ատտիկոս պատրիարքին հետ Աեսա-
 րիոյ արքեպիսկոպոսին կողմանէ տեղի ունեցած ձեռներէցութեան
 վրայ, որ Յունաց տիրապետութենէն առ ի թ առնելով քանի մի
 Հայաստանի գաւառաց վրայ իրաւասութիւն ստեղծել կաշխատէր:
 Ս. Սահակայ գանգատները յաջող ելք ունեցան և Աեսարիոյ
 արքեպիսկոպոսն իւր ձեռնաձգութենէն ետ քաշուիլ պարտաւորե-
 ցաւ: Ս. Յովսէփ կաթողիկոսն ալ նամակ գրեց ի Առստանդնուպո-
 լիս օգնութիւն հայցելու համար: Արդ այս կաթողիկոսներէն և
 ոչ վին ոչ Աեսարիոյ աթուէն և ոչ Առստանդնուպոլսոյ աթուէն

ձեռնադրու թիւն առած չէին, և եթէ Աստանդնուպոլսոյ ակթուն
 իրապէս այդպիսի մի իրաւունք ունեցած լինէր, նախ և առաջ
 իւր իրաւունքները պաշտպանելէ կսկսէր, և ոչ թէ նոյն կակթու-
 դիկոսներուն առաջարկած խնդիրները նկատողութեան կառնէր,
 մինչ այդպիսի ինչ երբէք տեղի ունեցած չէ: Չանց կրնեմք յետին
 դարերու մէջ Աստանդնուպոլսոյ և Հայոց ակթուններուն միջև
 տեղի ունեցած յարաբերութիւնները յիշատակել, զի նպատակ-
 նիս բոլոր եկեղեցական պատմութեան քաղուած մը ընել չէ: Այս
 ինչ յայտնի և ստոյգ և ապացուցեալ է թէ ոչ Քաղկեդոնի ժողո-
 վէն յառաջ և ոչ Քաղկեդոնի ժողովէն յետոյ Աստանդնուպոլսոյ
 պատրիարքները ոչ Հայաստանի վրայ իրաւասութիւն կամ ձեռ-
 նադրութեան իրաւունք գործածեցին և ոչ ալ ձեռնադրութեան
 իրաւունք ունենալ կարծեցին:

Այս ամենայն ցուցմանց զօրութեամբ կը հաստատուի թէ պատ-
 մական ճշմարտութիւն մի է որ Հայաստանեայց կակթողիկոսական
 ակթունը ինքնագլուխ եղաւ և է ի սկզբանէ և իւր ծագումէն
 սկսելով, և թէ նա չենթարկուեցաւ երբէք և ոչ մի գերագոյն
 կամ օտար ակթոսոյ, և թէ չիք ակթուն մը որ նորա վերայ իրաւա-
 սական ու է իրաւունք ունեցած լինի: Եւ հետևաբար բոլորովին
 անհիմն և կեղակարծ և ճշմարտութեան հակառակ են այն
 կարծիքները որք կենթադրեն թէ Հայաստանեայց կակթողիկոսա-
 կան ակթունը ապստամբութեան կամ հաւատոյ տարաձայնութեան
 պատճառով ինքնագլխութիւն յաիշտակած կամ ստանցած է:

(Մարտ-նախէն)

Մարտիա Եպիսկոպոս.

